



Հանձնաժողովի՝ քվեատուփը և հատուկ ծրարները հսկող անդամի գործառույթներ (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 65)

- Մշտապես պետք է գտնվեք ընտրական քվեատուփի մոտ:
- Պետք է վերահսկեք ընտրական քվեատուփը և հատուկ ծրարները:
- Պետք է փակ պահեք ընտրական քվեատուփի մեջ հատուկ ծրարը գցելու ճեղքը:
- Ընտրողին, քվեախցիկից դուրս գալուց հետո, պետք է ցուցում տաք, որ առանձին դրված սեղանից ինքնուրույն վերցնի մեկ հատուկ ծրար և նրա մեջ զետեղի ծալված ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները:
- Նրանից հետո, երբ վստահ կլինեք, որ ընտրողի ձեռքին միայն մեկ հատուկ ծրար կա, պետք է բացեք քվեատուփի ճեղքը և ընտրողին ցուցում տաք, որ հատուկ ծրարը գցի ընտրական քվեատուփի մեջ:
- Խնդրե՛ք ընտրողին ազատել ընտրական տեղամասը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- Միայն ընտրողն ունի ընտրական քվեաթերթիկը/ քվեաթերթիկները հատուկ ծրարի մեջ գետեղելու իրավունք: Բացառություն է «Ֆիզիկական վիճակ» ունեցող ընտրողը, որի փոխարեն նրա ներկայությամբ ընտրական քվեաթերթիկը /քվեաթերթիկները հատուկ ծրարի մեջ է գետեղում և ծրարը ընտրական քվեատուփի մեջ գցում նրա կողմից ընտրված անձը, որն օգնում է նրան քվեախցիկում ընտրական քվեաթերթիկը/ քվեաթերթիկները լրացնել:
- Թույլ չի տրվում ընտրական քվեատուփին մեկից ավելի ընտրողի մոտենալը:
- Ընտրական հանձնաժողովի անդամն իրավունք չունի բացել լրացված ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները:
- Մինչև ընտրողի կողմից քվեաթերթիկը/քվեաթերթիկները հատուկ ծրարի մեջ գետեղելը՝ իրավունք ունեք նրանից պահանջել՝ Ձեզ ցույց տալ, որ ձեռքում սահմանված քանակությամբ ընտրական քվեաթերթիկ և մեկ հատուկ ծրար կա: Ընտրողը պարտավոր է կատարել այդ պահանջը: